ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔ

ք. Վարդենիս **11/08/2025**

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 9
ԱՎԱԳԱՆՈՒ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ

Համայնքի ավագանու նիստին ներկա էին ավագանու 21 անդամներ:

Բացակա էին՝ Ռաֆայել Խչեյանը, Արտակ Մանուկյանը, Արամ Մելքոնյանը, Մուշեղ Շաբոյանը, Դավիթ Շահնազարյանը, Կարեն Սիմոնյանը

Համայնքի ղեկավարի հրավերով ավագանու նիստին մասնակցում էին՝
Սեյրան Գրիգորյան

Նիստը վարում էր ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ահարոն Խաչատրյանը

Նիստը արձանագրում էր աշխատակազմի քարտուղարին փոխարինող՝ Կարեն Աբրահամյանը

ԼՍԵՑԻՆ

ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ 2026 ԹՎԱԿԱՆԻ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ԱՀԱՐՈՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, 18-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի, ՀՀ կառավարության 2023 թվականի օգոստոսի 24-ի N 1421-Ն որոշման, ՀՀ շրջակա միջավայրի նախարարի 2023 թվականի սեպտեմբերի 4-ի N 310-Ն հրամանի, «Ընկերությունների կողմից վճարվող բնապահպանական հարկի նպատակային օգտագործման մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի դրույթներով, հիմք ընդունվելով, այն հանգամանքը, որ ծրագրի վերաբերյալ ՀՀ շրջակա միջավայրի նախարարությունը և ՀՀ առողջապահության

նախարարությունը որևէ դիտողություն և առարկություն չեն ներկայացնել ու հաշվի առնելով համայնքի ղեկավարի առաջարկությունը՝ համայնքի ավագանին **որոշում է.**

1.Հաստատել Վարդենիս համայնքի 2026 թվականի բնապահպանական ծրագիրը՝ համաձայն հավելվածի:

2.Սույն որոշում ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Հարցը ներկայացրեց համայնքի ղեկավարը՝ նշելով, որ Վարդենիս համայնքում 2026 թվականին բնապահպանական ծրագրով նախատեսվում է իրականացնել Վարդենիս համայնքի Վարդենիս քաղաքի աղբավայրի բարեկագման աշխատանքները՝ «Ընկերությունների կողմից վճարվող բնապահպանական հարկի նպատակային օգտագործման մասին» ՀՀ օրենքի դրույթներով:

Բնապահպանական ծրագրով նախատեսված է

. ցանկապատել աղբավայրի տարածքը 580մ, որը շնորհիվ տարածքը ցանկապատված և վերահսկվող կլինի, կանխելով թափառող կենդանիների մուտքն ու թափոնների անկառավարելի տարածումը:

. կատարել մուտքային ճանապահի (մոտ 100մ) բարեկագրման աշխատանքներ

Բնակիչների կողմից անընդմեջ ահազանգվել է աղբավայրից դեպի բնակելի հատվածներ աղբի տարածումը թե՛ թափառող շների և թե՛ քամու միջոցով և հիմնախնդիրը մշտապես մեր կողմից համարվել է առաջնահերթություն, այդ իսկ պատճառով ՀՀ շրջակա միջավայրի նախարարություն և ՀՀ առողջապահության նախարարություն է ներկայացվել Վարդենիս համայնքի աղբավայրի բարեկարգման աշխատանքների վերաբերյալ ծրագիր, ինչը հավանության է արժանացել:

Համայնքի ղեկավարն առաջարկեց հաստատել Վարդենիս համայնքի 2026 թվականի բնապահպանական ծրագիրը համաձայն հավելվածի:

Հարցի վերաբերյալ այլ առարկություններ և առաջարկություններ չեղան:

Քվեարկության արդյունքում 21 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ ձայների հարաբերակցությամբ հարցն ընդունվեց:

Կողմ-21 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 118-Ա)*

ԼՍԵՑԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 1-ԻՆ ԱՌԱՋԻՆ ԴԱՍԱՐԱՆ ՀԱՃԱԽՈՂ ԵՐԵԽԱՆԵՐԻՆ ՊԱՅՈՒՍԱԿՆԵՐ ԵՎ ԳՐԵՆԱԿԱՆ ՊԻՏՈՒՅՔՆԵՐ ՆՎԻՐԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻՑ ԳՈՒՄԱՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ԱՀԱՐՈՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ)

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի դրույթներով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը՝ համայնքի ավագանին **որոշում է.**

1.Թույլատրել Վարդենիս համայնքի ղեկավարին՝ Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Վարդենիս համայնքի 2025 թվականի սեպտեմբերի 1-ին առաջին դասարան հաճախող երեխաների համար պայուսակներ և գրենական պիտույքներ ձեռք բերելու նպատակով համայնքի բյուջեի 1.6.1-ի դասակարգման 4269 հոդվածից հատկացնել 3. 500. 000 (երեք միլիոն հինգ հարյուր հազար) ՀՀ դրամ:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Հարցը ներկայացրեց համայնքի ղեկավարը՝ առաջարկելով Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Վարդենիս համայնքի 2025 թվականի սեպտեմբերի 1-ին առաջին դասարան հաճախող երեխաների համար պայուսակներ և գրենական պիտույքներ ձեռք բերելու նպատակով համայնքի բյուջեի 1.6.1-ի դասակարգման 4269 հոդվածից հատկացնել 3. 500. 000 (երեք միլիոն հինգ հարյուր հազար) ՀՀ դրամ:

Համայնքի ղեկավարը նշեց, որ բարերարների հետ մի քանի օր առաջ 250 երեխայի տրամադրվել է գրենական պիտույքներ և կոշիկներ՝ 2-րդ և 3-րդ դասարանցիներին:

Համայնքի ղեկավարը նշեց, որ խոսոել է բարերարների հերտ և եթե մինչև սեպտեմբերի մեկ հնարավոր լինի տրամադրել որոշակի չափով գրենականներ այդ 3,500,000 դրամը ամբողջությամբ չի ծախսվի:

Առաջարկությամբ հանես եկավ ավագանու անդամ Նաիրա Մանուչարյանը՝ նշելով, որ խնդիր է առաջանում անապահով ընտանիքների երեխաների գրքերի գումարների վճարի հետ կապված, խնդրելով՝ գումար տնտեսվելու դեպքում այդ գումարն ուղղել վերոնշյալ հարցին:

Ի պատասխան համայնքի ղեկավարը նշեց, որ հետագայում կտեսնեն ինչ է մնում և մնացացը կուղղեն այդ նպատակին:

Հարցի վերաբերյալ այլ առարկություններ և առաջարկություններ չեղան:

Քվեարկության արդյունքում 21 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ ձայների հարաբերակցությամբ հարցն ընդունվեց:

Կողմ-21 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 117-Ա)*

<u>ԼՍԵՑԻՆ</u>

ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԱՐԶԻԿՆԵՐԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆՆ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 12-ԻՑ 21-Ը ԻՏԱԼԻԱՅՈՒՄ ԿԱՅԱՆԵԼԻՔ ՔԻՔ-ԲՈՔՍԻՆԳԻ WAKO ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐԻ ԵՎՐՈՊԱՅԻ ԱՌԱՋՆՈՒԹՅԱՆՆ ԱՊԱՀՈՎԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ԳՈՒՄԱՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ԱՀԱՐՈՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ)

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի և 47-րդ հոդվածի 1-ին կետի դրույթներով, հաշվի առնելով Վարդենիս համայնքի ղեկավարի առաջարկը՝ համայնքի ավագանին **որոշում է.**

1.2025 թվականի սեպտեմբերի 12-ից 21-ը Իտալիայի Ջեսոլո քաղաքում կայանալիք քիք բոքսինգի WAKO երիտասարդների Եվրոպայի առաջնությանը Վարդենիսի մարզիկների մասնակցությունն ապահովելու նպատակով համայնքի բյուջեի սպորտմիջոցառումների համար նախատեսված ծախսային գումարներից տրամադրել 2 500 000 /երկու միլիոն հինգ հարյուր հազար / ՀՀ դրամ գումար:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Հարցը ներկայացրեց համայնքի ղեկավարը՝ առաջարկելով 2025 թվականի սեպտեմբերի 12-ից 21-ը Իտալիայի Ջեսոլո քաղաքում կայանալիք քիք բոքսինգի WAKO երիտասարդների Եվրոպայի առաջնությանը՝ Վարդենիսի մարզիկների մասնակցությունն ապահովելու նպատակով համայնքի բյուջեի սպորտմիջոցառումների համար նախատեսված ծախսային գումարներից տրամադրել 2 500 000 /երկու միլիոն հինգ հարյուր հազար/ ՀՀ դրամ գումար:

Ելույթով հանդես եկավ ավագանու անդամ Նաիրա Մանուչարյանը՝ առաջարկելով հնարավորության դեպքում փոխհատուցել ամբողջությամբ, քանի որ ծնողը հնարավորություն չունի վճարելու, որին ի պատասխան Համայնքի ղեկավարը նշեց, որ մարզիչը ծնողի և ֆեդերացիայի հետ համաձայնեցրել է գումարի չափը, մնացած գումարը կփոխանցի ֆեդերացիան:

Հարցի վերաբերյալ առարկություններ և առաջարկություններ չեղան:

Քվեարկության արդյունքում 21 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ ձայների հարաբերակցությամբ հարցն ընդունվեց:

Կողմ-21 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 116-Ա)*

<u>ԼՍԵՑԻՆ</u>

ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԴԱՐԱՆԱԿ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐՈՒՄ ՆԱԽԱՏԵՍՎՈՂ <<ՍԵՎԱՆ ՖԵՍՏԻՎԱԼ ՍԻԹԻ>> ՀԱՆԳՍՏԻ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԳՈՏՈՒ ԿԱՌՈՒՑՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԱԽՆԱԿԱՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ԳՈՒՐԳԵՆ ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ)

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 42-րդ հոդվածի և <<Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման փորձաքննության մասին>> ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ կետի դրույթներով, հիմք ընդունելով ՀՀ

Գեղարքունիքի մարզի Վարդենիս համայնքի Դարանակ բնակավայրում նախատեսվող <<Սևան Ֆեստիվալ Սիթի>> հանգստի և սպասարկման գոտում կառուցման աշխատանքների իրականացման վերաբերյալ 2025 թվականի հունիսի 27-ին կայացած 1-ին հանրային քննարկման արձանագրությունը՝ համայնքի ավագանին **որոշում է.**

1.Տալ նախնական համաձայնություն՝ Դարանակ բնակավայրում նախատեսվող <<Սևան Ֆեստիվալ Սիթի>> հանգստի և սպասարկման գոտում կառուցման աշխատանքների իրականացման վերաբերյալ:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Հարցը ներկայացրեց համայնքի ղեկավարը՝ նշելով, որ ՀՀ Գեղարքունիքի մարզի Վարդենիս համայնքի Դարանակ բնակավայրում նախատեսվող՝ <<Սևան Ֆեստիվալ Սիթի>> հանգստի և սպասարկման գոտու նախագծի և նախնական գնահատման հայտի վերաբերյալ իրականացվել է 1-ին հանրային քննարկումը՝ <<Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին>> ՀՀ օրենքի պահանջների համաձայն:

Նախատեսվող հանգստի և սպասարկման գոտին կառուցվելու է Դարանակ բնակավայրում <<Սևան ազգային պարկի>> կողմից կառուցապատման իրավունքով տրամադրված տրածքում, գործունեությունը կրելու է սեզոնային բնույթ և իր մեջ ներառելու է տարբեր ծավալների միջոցառումների անցկացում, որոնցից ամենամեծը լինելու է <<Սևան Ստարտափ Սամմիթը>>, որին վերջին տարիներին մասնակցել են շուրջ 10000 մարդ աշխարհի 40 պետություններից:

Միջոցառման տարածքները ունենալու են տարբեր ենթակառուցվածքներ, այդ թվում հրապարակ մեծ բեմով, մինչև 100 միավոր վրան պարունակող հյուրատուն, որտեղ կարող են գիշերել մինչև 5000 մասնակից, ինչպես նաև սանհանգույցներ և լոգարաններ ու բազմաֆունկցիոնալ սննդի գոտի(ֆուտկորդ):

Առաջարկեց տալ նախնական համաձայնություն՝ Դարանակ բնակավայրում նախատեսվող <<Սևան Ֆեստիվալ Սիթի>> հանգստի և սպասարկման գոտում կառուցման աշխատանքների իրականացման վերաբերյալ:

Հարցի վերաբերյալ առարկություններ և առաջարկություններ չեղան:

21 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ ձայների հարաբերակցությամբ հարցն ընդունվեց:

Կողմ-21 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 115-Ա)*

ԼՍԵՑԻՆ

ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՅՐՔ-ՆԵՐԻՔԻՆ ՇՈՐԺԱ-ՎԵՐԻՆ ՇՈՐԺԱ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՀԱՐԱԿԻՑ ՏԱՐԱԾՔՆԵՐՈՒՄ ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԵՐԿՐԱԲԱՆԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԱԽՆԱԿԱՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ԳՈՒՐԳԵՆ ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ)

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 42-րդ հոդվածի և <<Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման փորձաքննության մասին>> ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ կետի դրույթներով, հիմք ընդունելով ՀՀ Գեղարքունիքի մարզի Վարդենիս համայնքի Այրք-Ներքին Շորժա-Վերին Շորժա բնակավայրերի հարակից տարածքներում նախատեսվող երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների իրականացման վերաբերյալ 2025 թվականի հուլիսի 4-ին կայացած 1-ին հանրային քննարկման արձանագրությունը՝ համայնքի ավագանին **որոշում է**.

1.Տալ նախնական համաձայնություն՝ Վարդենիս համայնքի Այրք-Ներքին Շորժա-Վերին Շորժա բնակավայրերի հարակից տարածքներում նախատեսվբող երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների իրականացման վերաբերյալ:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Համայնքի ղեկվարը ներկայացրեց հարցը՝ առաջարկելով տալ նախնական համաձայնություն՝ Վարդենիս համայնքի Այրք-Ներքին Շորժա-Վերին Շորժա բնակավայրերի հարակից տարածքներում նախատեսվբող երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների իրականացման վերաբերյալ:

Համայնքի ղեկավարը նշեց, որ ՀՀ Գեղարքունիքի մարզի Վարդենիս համայնքի՝ Այրք-Ներքին Շորժա-Վերին Շորժա բնակավայրերի հարակից՝ 68 քառ. կմ. մակերեսով տարածքներում նախատեսվող <<ԳԵՈԱՐՄ>> ՍՊ ընկերության կողմից իրականացվող երկրաբնական ուսումնասիրության աշխատանքների վերաբերյալ իրականացվել է 1-ին հանրային քննարկումը՝ <<Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին>> ՀՀ օրենքի պահանջների համաձայն:

Նախատեսվող երկրաբանական ուսումնասիրությունները ընդանուր աշխատանքների առաջին փուլն են կազմելու և տևելու են երեք տարի, որոնց նպատակը լինելու է պարզել արդյոք այդ 68 քառ. կմ. մակերեսով տարածքում հնարավոր է հանքավայր հայտնաբերել: Տվյալ տարածքներից վերցվելու են նմուշներ և ուղարկվելու են լաբորատոր փորձաքննության և ըստ արդյունքների տարածքը բաժանվելու է տեղամասերի և ավելի մանրամասն երկրաբանական աշխատանքներ են կատարվելու այն տարածքների վրա, որտեղ փորձաքննության արդյունքները ավելի բարձր ցուցանիշ են ապահովելու:

Տեղանքում աշխատելու են երկրաբանների խումբ, ովքեր տեղակայվելու են տվյալ տարածքն ընդգրկող երեք բնակավայրերից մեկում: Աշխատանքների իրականացման համար անհրաժեշտ են լինելու բանվորներ և վարորդ, որոնց ընդգրկելու են տեղի բնակչությունից:

Հետագայում աշխատանքի ծավալների մեծացման զուգընթաց ավելի շատ մարդիկ՝ տեղի բնակչությունից կնդգրկվեն աշխատանքներում:

Հարցի վերաբերյալ առարկություններ և առաջարկություններ չեղան:

Քվեարկության արդյունքում 21 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ ձայների հարաբերակցությամբ հարցն ընդունվեց:

Կողմ-21 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 114-Ա)*

ԼՍԵՑԻՆ

ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ «ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐԴԵՆԻՍ ՔԱՂԱՔԻ Վ. ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ ՓՈՂՈՑԻ ՓՈՍԱՅԻՆ ՆՈՐՈԳՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ» 2025 ԹՎԱԿԱՆԻ N 94-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ԱՀԱՐՈՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ)

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի, <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածների դրույթներով, հիմք ընդունվել «ԱՐՇԻՆ-ՔՈՆՍԹՐԱՔՇՆ» ՍՊԸ-ի կողմից ներկայացրած ծավալաթերթ նախահաշիվները և հաշվի առնելով համայնքի ղեկավարի առաջարկությունը՝ Վարդենիս քաղաքի Վ. Համբարձումյան փողոցը նախագծով նախատեսված վիճակի հասցնելու մասին՝ համայնքի ավագանին **որոշում է.**

1.Վարդենիս համայնքի ավագանու «Վարդենիս համայնքի Վարդենիս քաղաքի Վ. Համբարձումյան փողոցի փոսային նորոգման աշխատանքների համար գումար հատկացնելու մասին» 2025 թվականի N 94-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները.

1.1 Որոշման 2-րդ կետի «Թույլատրել համայնքի ղեկավարին՝ Վարդենիս քաղաքի Վ. Համբարձումյան փողոցի փոսալցման աշխատանքների իրականացման համար համայնքի բյուջեից 1.6.1 գործառնական դասակարգման 4251 տնտեսագիտական հոդվածից հատկացնել՝ 20.350.000 ՀՀ դրամ» բառակապակցությունը փոխարինել՝ «Թույլատրել համայնքի ղեկավարին՝ Վարդենիս քաղաքի Վ. Համբարձումյան փողոցի փոսալցման աշխատանքների իրականացման համար համայնքի բյուջեից 1.6.1 գործառնական դասակարգման 4251 տնտեսագիտական հոդվածից հատկացնել՝ 31479.7 (երեսունմեկ միլիոն չորս հարյուր յոթսունինն հազար յոթ հարյուր) ՀՀ դրամ և հրատապությունից ելնելով հայտարարել հրատապ մեկ անձից գնման ընացակարգ՝ Վ. Համբարձումյան փողոցի փոսալցման աշխատանքներ իրականացնելու նպատակով» բառակապակցությամբ:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Հարցը ներկայացրեց համայնքի ղեկավարը և
առաջարկեց Վարդենիս համայնքի ավագանու «Վարդենիս համայնքի Վարդենիս քաղաքի Վ. Համբարձումյան փողոցի փոսային նորոգման աշխատանքների համար

գումար հատկացնելու մասին» 2025 թվականի N 94-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները.

Որոշման 2-րդ կետի «Թույլատրել համայնքի ղեկավարին՝ Վարդենիս քաղաքի Վ. Համբարձումյան փողոցի փոսալցման աշխատանքների իրականացման համար համայնքի բյուջեից 1.6.1 գործառնական դասակարգման 4251 տնտեսագիտական հոդվածից հատկացնել՝ 20.350.000 ՀՀ դրամ» բառակապակցությունը փոխարինել՝ «Թույլատրել համայնքի ղեկավարին՝ Վարդենիս քաղաքի Վ. Համբարձումյան փողոցի փոսալցման աշխատանքների իրականացման համար համայնքի բյուջեից 1.6.1 գործառնական դասակարգման 4251 տնտեսագիտական հոդվածից հատկացնել՝ 31479.7 (երեսունմեկ միլիոն չորս հարյուր յոթսունինն հազար յոթ հարյուր) ՀՀ դրամ և հրատապությունից ելնելով հայտարարել հրատապ մեկ անձից գնման ընացակարգ՝ Վ. Համբարձումյան փողոցի փոսալցման աշխատանքներ իրականացնելու նպատակով» բառակապակցությամբ:

Տեղեկացրեց, որ Վարդենիս համայնքի 2023 թվականի նպատակային սուբվենցիոն ծրագրերի շրջանակում նախատեսված էր Վարդենիս քաղաքի Վ. Համբարձումյան փողոցի ասֆալտապատման աշխատանքների իրականացումը: 2023 թվականի օգոստոսի 1-ին, շինարարական աշխատանքների կազմակերպման նպատակով, «ԿԱՊԱՎՈՐ» ՍՊԸ-ի հետ կնքվել է պայմանագիր և համաձայնագիր, սակայն, որոշ ժամանակ անց, «ՎԵՈԼԻԱ ՋՈՒՐ» ՓԲԸ-ի դիմումի հիման վրա, ասֆալտապատման աշխատանքները դադարեցվել են՝ Վ. Համբարձումյան փողոցում ջրագծերի կառուցման աշխատանքների իրականացման անհրաժեշտությամբ: Այժմ, երբ նշված աշխատանքներն ավարտվել են, շինարարական կազմակերպությունը կարող է վերսկսել ասֆալտապատման գործընթացը:

«ԿԱՊԱՎՈՐ» ՍՊԸ-ի մասնագետների կողմից իրականացված ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ 2022 թվականին կազմված նախագծով նախատեսված շինարարական շերտերը՝ առկա ծածկի ֆրեզավորում, փոսային նորոգում, հարթեցնող շերտի տեղադրում (50%) և 5 սմ մանրահատիկ ասֆալտբետոն, չեն կարող կիրառվել տվյալ պահի իրական պայմաններում:

Մասնավորապես՝ ջրագծերի կառուցման հատվածներում գրունտը փափուկ է, իսկ մնացած հատվածներում՝ ֆրեզավորումից հետո հնարավոր չէ ապահովել փոսային նորոգման պատշաճ իրականացում: Հաշվի առնելով վերոնշյալը՝ շինարարական կազմակերպությունն առաջարկել է վերանայել նախագծային լուծումները:

«ԿԱՊԱՎՈՐ» ՍՊԸ-ի գրությունը Վարդենիսի համայնքապետարանը փոխանցել է նախագծող «ԱՐՇԻՆ-ՔՈՆՍԹՐԱՔՇՆ» ՍՊԸ-ին, որը իրականացրել է անհրաժեշտ լրացուցիչ ուսումնասիրություններ և ներկայացրել մասնագիտական եզրակացություն: Եզրակացության համաձայն՝ 2022 թվականին կազմված նախագիծը ներկա փուլում չի կարող իրագործվել, քանի որ այն չի համապատասխանում տարածքի ներկայիս տեխնիկական վիճակին:

Անհրաժեշտ է փոսային աշխատանքները վերացնելու նպատակով հայտարարել մեկ անձից գնման ընացակարգ՝ կատարելով վերը նշված աշխատանքները և թերությունները վերացնելու հետո թույլ տալ «Կապավոր» ՍՊԸ-ին իրականացնել պայմանագրով նախատեսված ասֆալտապատման աշխատանքները: Վ.

Համբարձումյան փողոցի շինարարական աշխատանքներն ավարտին հասցնելու համար առաջարկեց թույլ տալ համայնքի բյուջեից հատկացնել 31479.7 (երեսունմեկ միլիոն չորս հարյուր յոթսունինն հազար յոթ հարյուր) ՀՀ դրամ և հայտարարել հրատապ մեկ անձից գնման ընթացակարգ:

Հարցի վերաբերյալ առարկություններ և առաջարկություններ չեղան:

21 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ ձայների հարաբերակցությամբ հարցն ընդունվեց:

Կողմ-21 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 113-Ա)*

ԼՍԵՑԻՆ

ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ <<ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԲՅՈՒՋԵՆ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ ԵՎ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ>> 24 ՀՈՒՆՎԱՐԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ N 3-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ՍԵՅՐԱՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ)

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի, <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածների դրույթներով, հիմք ընդունելով Վարդենիս համայնքի ավագանու 2025 թվականի հունիսի 13-ի «Վարդենիս համայնքի մասհանումների ծախսման 2025 թվականի ծրագիրը հաստատելու մասին» N 95-Ա որոշումը և հաշվի առնելով Վարդենիս համայնքի ղեկավարի առաջարկությունը՝ համայնքի ավագանին **որոշում է.**

Վարդենիս համայնքի ավագանու 24 հունվարի 2025 թվականի <<Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Վարդենիս համայնքի 2025 թվականի տարեկան բյուջեն քննարկելու և հաստատելու մասին>> N 3-Ն որոշման հավելվածներում կատարել հետևյալ փոփոխությունները.

1.Ֆոնդային բյուջեի 4.2.4 գործառնական դասակարգման 5113 տնտեսագիտական հոդվածում առկա 84 747.3 հազ.դրամ գումարից պակասեցնել 61 106.0 հազ. դրամ ավելացնելով 1.6.1 /ընդհանուր բնույթի ծառայություններ/ գործառնական դասակարգման 5121 տնտեսագիտական հոդվածին՝ 27000 . 0 հազ.դրամ, 6.3.1 / ջրամատակարարումներ/ գործառնական դասակարգման 5113 տնտեսագիտական հոդվածին՝ 26 150,0 հազ.դրամ, 6.4.1 /փողոցների լուսավորություն/ գործառնական դասակարգման 5112 տնտեսագիտական հոդվածին՝ 7 956. 0 հազ.դրամ, իսկ 4.2.4 գործառնական դասակարգման 5113 տնտեսագիտական հոդվածում մնացած 23 641.3 հազ.դրամ գումարն էլ վերաձևակերպել 5112 տնտեսագիտական հոդվածով:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Հարցը ներկայացրեց համայնքի ղեկավարը և առաջարկեց՝ պայմանավորված իրականացվող ծրագրերի ֆինանսավորման անհրաժեշտությամբ

Վարդենիս համայնքի ավագանու 24 հունվարի 2025 թվականի <<Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Վարդենիս համայնքի 2025 թվականի տարեկան բյուջեն քննարկելու և հաստատելու մասին>> N 3-Ն որոշման հավելվածներում կատարել հետևյալ փոփոխությունները.

1.Ֆոնդային բյուջեի 4.2.4 գործառնական դասակարգման 5113 տնտեսագիտական հոդվածում առկա 84 747.3 հազ.դրամ գումարից պակասեցնել 61 106.0 հազ. դրամ ավելացնելով 1.6.1 /ընդհանուր բնույթի ծառայություններ/ գործառնական դասակարգման 5121 տնտեսագիտական հոդվածին՝ 27000.0 հազ.դրամ, 6.3.1 / ջրամատակարարումներ/ գործառնական դասակարգման 5113 տնտեսագիտական հոդվածին՝ 26 150,0 հազ.դրամ, 6.4.1 /փողոցների լուսավորություն/ գործառնական դասակարգման 5112 տնտեսագիտական հոդվածին՝ 7 956.0 հազ.դրամ, իսկ 4.2.4 գործառնական դասակարգման 5113 տնտեսագիտական հոդվածում մնացած 23 641.3 հազ.դրամ գումարն էլ վերաձևակերպել 5112 տնտեսագիտական հոդվածով:

Ավելի մանրամասն ներկայացրեց աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժնի պետ Սեյրան Գրիգորյանը:

Հարցի վերաբերյալ առարկություններ և առաջարկություններ չեղան:

21 կողմ, 0 դեմ, 0 ձեռենպահ ձայների հարաբերակցությամբ հարցն ընդունվեց:

Կողմ-21 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 112-Ն)*

<u>ԼՍԵՑԻՆ</u>

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ԱՀԱՐՈՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ)

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 17-րդ հոդվածի դրույթներով՝ համայնքի ավագանին **որոշում է.**

Հաստատել 2025 թվականի օգոստոսի 11-ին ժամը 14:00-ին կայանալիք Վարդենիս համայնքի ավագանու արտահերթ նիստի օրակարգը՝ բաղկացած 7 հարցից.

1.ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ <<ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԲՅՈՒՋԵՆ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ ԵՎ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ>> 24 ՀՈՒՆՎԱՐԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ N 3-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ:
2.ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ «ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐԴԵՆԻՍ ՔԱՂԱՔԻ Վ. ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ ՓՈՂՈՑԻ ՓՈՍԱՅԻՆ ՆՈՐՈԳՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ» 2025 ԹՎԱԿԱՆԻ N 94-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ:
3.ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՅՐՔ-ՆԵՐԻՔԻՆ ՇՈՐԺԱ-

ՎԵՐԻՆ ՇՈՐԺԱ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՀԱՐԱԿԻՑ ՏԱՐԱԾՔՆԵՐՈՒՄ ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԵՐԿՐԱԲԱՆԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԱԽՆԱԿԱՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ:
4.ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԴԱՐԱՆԱԿ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐՈՒՄ ՆԱԽԱՏԵՍՎՈՂ <<ՍԵՎԱՆ ՖԵՍՏԻՎԱԼ ՍԻԹԻ>> ՀԱՆԳՍՏԻ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԳՈՏՈՒ ԿԱՌՈՒՑՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԱԽՆԱԿԱՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ:
5.ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԱՐԶԻԿՆԵՐԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆՆ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 12-ԻՑ 21-Ը ԻՏԱԼԻԱՅՈՒՄ ԿԱՅԱՆԵԼԻՔ ՔԻՔ-ԲՈՔՍԻՆԳԻ WAKO ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐԻ ԵՎՐՈՊԱՅԻ ԱՌԱՋՆՈՒԹՅԱՆՆ ԱՊԱՀՈՎԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ԳՈՒՄԱՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ:
6.ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 1-ԻՆ ԱՌԱՋԻՆ ԴԱՍԱՐԱՆ ՀԱՃԱԽՈՂ ԵՐԵԽԱՆԵՐԻՆ ՊԱՅՈՒՍԱԿՆԵՐ ԵՎ ԳՐԵՆԱԿԱՆ ՊԻՏՈՒՅՔՆԵՐ ՆՎԻՐԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻՑ ԳՈՒՄԱՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ:
7.ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ 2026 ԹՎԱԿԱՆԻ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ:

2025թ. օգոստոսի 11-ին ժամը 14:00-ին կայացավ Վարդենիս համայնքի ավագանու արտահերթ նիստը: Ավագանու 27 անդամներից նիստին ներկա էին 21-ը, բացակայում էին <<Քաղաքացիաան պայմանագիր խմբակցության>> ավագանու անդամներ Արամ Մելքոնյանը և Արտակ Մանուկյանը, Ռաֆայել Խչեյանը, Կարեն Սիմոնյանը, Մուշեղ Շաբոյանը և <<Միասնական Վարդենիս>> խմբակցության ավագանու անդամ Դավիթ Շահնազարյանը: Նիստը իրավազոր է: Նիստը վարում է համայնքի ղեկավար Ահարոն Խաչատրյանը:

Համայնքի ղեկավարը նշեց, որ հարցերի հրատապությունից ելնելով և ծրարգերի ժամկետները պահպանելու համար հրավիրվել է արտահերթ նիստ և օրակարգային հարցերը ներկայացվել են, ելնելով պայմանավորված համապատասխան գերատեսչության առաջարկով անհրաժեշտություն է առաջացել օրակարգում ավելացնել ևս մեկ հարց՝

ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ 2026 ԹՎԱԿԱՆԻ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համայնքի ղեկավարը առաջարկեց հաստատել 11.08.2025 թվականի արտահերթ նիստի օրակարգը հետևյալ հարցերով.

1.ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ <<ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԲՅՈՒՋԵՆ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ ԵՎ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ>> 24 ՀՈՒՆՎԱՐԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ N 3-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ:
2.ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ «ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐԴԵՆԻՍ ՔԱՂԱՔԻ Վ. ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ ՓՈՂՈՑԻ ՓՈՍԱՅԻՆ ՆՈՐՈԳՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ» 2025 ԹՎԱԿԱՆԻ N 94-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ:
3.ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՅՐՔ-ՆԵՐԻՔԻՆ ՇՈՐԺԱ-ՎԵՐԻՆ ՇՈՐԺԱ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՀԱՐԱԿԻՑ ՏԱՐԱԾՔՆԵՐՈՒՄ ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԵՐԿՐԱԲԱՆԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ

ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԱԽՆԱԿԱՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ:
4.ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԴԱՐԱՆԱԿ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐՈՒՄ ՆԱԽԱՏԵՍՎՈՂ <<ՍԵՎԱՆ ՖԵՍՏԻՎԱԼ ՍԻԹԻ>> ՀԱՆԳՍՏԻ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԳՈՏՈՒ ԿԱՌՈՒՑՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԱԽՆԱԿԱՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ:
5.ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԱՐԶԻԿՆԵՐԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆՆ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 12-ԻՑ 21-Ը ԻՏԱԼԻԱՅՈՒՄ ԿԱՅԱՆԵԼԻՔ ՔԻՔ-ԲՈՔՍԻՆԳԻ WAKO ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐԻ ԵՎՐՈՊԱՅԻ ԱՌԱՋՆՈՒԹՅԱՆՆ ԱՊԱՀՈՎԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ԳՈՒՄԱՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ:
6.ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 1-ԻՆ ԱՌԱՋԻՆ ԴԱՍԱՐԱՆ ՀԱՃԱԽՈՂ ԵՐԵԽԱՆԵՐԻՆ ՊԱՅՈՒՍԱԿՆԵՐ ԵՎ ԳՐԵՆԱԿԱՆ ՊԻՏՈՒՅՔՆԵՐ ՆՎԻՐԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻՑ ԳՈՒՄԱՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ:
7.ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ 2026 ԹՎԱԿԱՆԻ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Առարկություններ և առաջարկություններ չեղան:

Քվեարկության արդյունքում 21 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ ձայների հարաբերակցությամբ հարցն ընդունվեց:

Կողմ-21 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 111-Ա)*

Ավագանու անդամներ

ԱՀԱՐՈՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ

ԿԱՐԵՆ ՄԿՐՏՉՅԱՆ

ՍԱԹԵՆԻԿ ՄԻՆԱՍՅԱՆ

ԱՐՄԻՆԵ ԱՂԱՋԱՆՅԱՆ

ԱՐՈՒՍՅԱԿ ԱՎԵՏԻՍՅԱՆ

ՎԱՐՈՒԺԱՆ ԱՎԵՏԻՍՅԱՆ

ՀԱՄԼԵՏ ԲԱՋՈՅԱՆ

ԱՇՈՏ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՀԱՅԿ ԵՐԱՆՈՍՅԱՆ

ՄԵԼԱՆՅԱ ԵՓՐԵՄՅԱՆ

ԱՇՈՏ ԽԱՉԱՏՐՅԱՆ

ԱՐԱՔՍՅԱ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

ՍՊԱՐՏԱԿ ՀՈՎՀԱՆԻՍՅԱՆ

ՆԻՆԱ ՂԱՐԻԲՅԱՆ

ԱՐՄԱՆ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

ՆԱԻՐԱ ՄԱՆՈՒՉԱՐՅԱՆ

ՎԱՐԴԱՆ ՄԱՐԳԱՐՅԱՆ

ԶԱՎԵՆ ՇՀՈՅԱՆ

ՌՈՄԵԼՅԱ ՍԱՐԳՍՅԱՆ

ՍԵՎԱԿ ՍԻՄՈՆՅԱՆ

ՋԵՄԱՐԱ ՎԱՐԴԱՆՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՀԱՐՈՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ_____

Նիստն արձանագրեց՝ Կարեն Աբրահամյանը _____